ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ՕԴԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իսրայելի Պետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ «Պայմանավորվող Կողմեր» լինելով Միջազգային քաղաքացիական ավիացիայի Չիկագոյի կոնվենցիայի մասնակիցներ, որը բաց է ստորագրման համար 1944թ. դեկտեմբերի 7-ից ի վեր և ըմբռնելով օդային տրանսպորտի կարևոր դերը երկու երկրների ժողովրդների միջև համագործակցության, փոխըմբռնման, բարեկամության հաստատման և պահպանման համար, ձգտելով խթանել Իսրայելի և Հայաստանի միջև օդային փոխադրումների զարգացումը, ինչպես նաև շարունակելով՝

- միջազգային համագործակցությունը վերոհիշյալ բնագավառում,

- ցանկանալով ստորագրել Համաձայնագիր երկու երկրների տարածքների միջև օդային հաղորդակցության իրականացման վերաբերյալ համաձայնվեցին հետևյալի շուրջ.

ՀՈԴՎԱԾ 1

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Պայմանագրի մեկնաբանման և կիրառման համար, բացի ներքոհիշյալ հանգամանքներից՝

1. «Կոնվենցիա» տերմինը ի նկատի ունի Միջազգային քաղաքացիական ավիացիայի Չիկագոյի կոնվենցիան, որը բաց է ստորագրման համար 1944թ. դեկտեմբերի 7-ից ի վեր և ընդգրկում է տվյալ Կոնվենցիայի Հոդված 90-ի բոլոր Հավելվածները, ըստ Հոդված 90-ի և 94-ի՝ տվյալ Կոնվենցիայի դրույթների և Հավելվածների մեջ կատարված բոլոր լրացումները, պայմանավոր այդ Հավելվածներն ու լրացումները ընդունել և վավերացրել են Պայմանավորվող Կողմերը:

2. «Համաձայնագիր» տերմինը ի նկատի ունի սույն Համաձայնագիրը, նրա Հավելվածները և այսուհետ կատարվող ցանկացած լրացում, որոնք կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. «Հավելված» տերմինը ի նկատի ունի սույն Համաձայնագրի Հավելվածը կամ ըստ սույն Համաձայնագրի՝ Հոդված 17-ի 2-րդ կետի ընդունած լրացումները:

4. «Իշխանություններ» տերմինը, Իսրայելի Պետության դեպքում ի նկատի ունի Տրանսպորտի Նախարարությանը, իսկ Հայաստանի Հանրապետության դեպքում՝ Քաղաքացիական ավիացիայի Գլխավոր վարչությանը, կամ երկու դեպքում էլ, ցանկացած անձ կամ մարմին, որը իրավասու է իրականացնելու վերոհիշյալ իշխանությունների ֆունկցիաները:

5. «Նշանակված ավիաընկերություն» տերմինը ի նկատի ունի Պայմանավորվող յուրաքանչյուր Կողմի նշանակած ավիաընկերությանը ըստ սույն Համաձայնագրի Հավելվածում սահմանված Հոդված 3-ի դրույթների:

6. «Տարածք» «օդային ծառայություններ», «միջազգային օդային ծառայություններ», «ավիաընկերություն», «ոչ կոմերցիոն նպատակով կանգառ» տերմինները գոյություն ունեն Կոնվենցիայի 2-րդ և 96-րդ Հոդվածների դրույթներում:

7. «Նշված երթուղիներ» տերմինը ի նկատի ունի սույն Համաձայնագրի Հավելվածում հաստատված կամ հաստատվելիք երթուղիները:

8. «Համաձայնեցված ծառայություններ» տերմինը նշանակում է ուղևորների, ուղեբեռների, փոստի փոխադրման համար միջազգային օդային ծառայությունները, որոնք իրականացվում են սահմանված երթուղիներով, սույն Համաձայնագրի դրույթների համաձայն:

9. «Սակագին» նշանակում է ուղևորների, ուղեբեռների և բեռների համար վճարվող գներ, ինչպես նաև այն պայմանները, որոնց դեպքում տվյալ գները կիրառելի են ներառյալ զանազան օժանդակ ծառայությունների համար վճարումները, բացառությամբ փոստի փոխադրման համար վարձատրությունը:

10. «Տարողություն» տերմինը «համաձայնեցված ծառայություններ» տերմինի առնչությամբ նշանակում է նման ծառայություններում օգտագործվող օդանավի տարողությունը բազմապատկած տվյալ ժամանակահատվածում և երթուղում, կամ երթուղու մի մասում այդ օդանավի շահագործման հաճախականությամբ:

ՀՈԴՎԱԾ 2

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ մյուս Կողմին տրամադրում է սույն Հավելվածում նշված երթուղիներում տվյալ Համաձայնագրով սահմանված իրավունքներ միջազգային երթուղիներում իրականացնելու հաղորդակցություններ՝ ըստ Հավելվածում սահմանված չվացուցակի:

2. Եթե սույն Համաձայնագրում կամ նրա Հավելվածներում այլ սահմանումներ չկան, ապա Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրի նշանակած ավիաընկերությունը կունենա հետևյալ իրավունքները՝

ա. առանց վայրէջքի թռիչքներ իրականացնել մյուս Պայմանավորվող Կողմի տարածքով,

բ. նշված տարածքում վայրէջք կատարել ոչ կոմերցիոն նպատակներով,

գ. նշված երթուղով համաձայնեցված ծառայություններ իրականացնելիս, Համաձայնագրի Պայմանավորվող Կողմերից մեկի տարածքում կատարել մյուս Կողմի տարածքից ժամանող, կամ այնտեղ մեկնող

ուղևորների, ուղեբեռների, փոստի բեռնում և բեռնաթափում, սույն Համաձայնագրի Հավելվածում սահմանված վայրերում:

3. Սույն Համաձայնագիրը Պայմանավորվող Կողմերից ոչ մեկի նշանակված ավիաընկերությանը չի տրամադրում արտոնություն՝ մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում ընդունել ուղևորներ, բեռներ կամ փոստ, լինի դա վարձով թե որոշակի վճարով, մյուս Կողմի տարածքի մեկ այլ վայր հասցնելու համար:

ՀՈԴՎԱԾ 3

ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ԵՎ

ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

1. Համաձայնագրի Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի մյուս Կողմին գրավոր ներկայացնել իր կողմից նշանակված այն ավիաընկերությանը, որը լիազորված է սահմանված երթուղիներով համաձայնեցված ծառայություններ իրականացնելու երկու երկրների տարածքների միջև:

2. Նման նշանակման մասին տեղյակ պահվելուց հետո Պայմանավորվող մյուս Կողմը, առանց հապաղման համապատասխան իրավասություններ է տալիս նշանակված ավիաընկերությանը, ըստ սույն Հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի:

3. Համաձայնագրի Պայմանավորվող Կողմերից մեկի ավիացիոն իշխանությունները մյուս Կողմի նշանակված ավիաընկերությունից կարող են պահանջել ենթարկվելու միջազգային օդային ծառայությունների շահագործման վերաբերյալ օրենքներին և կանոնակարգին՝ համաձայն կոնվենցիայի դրույթների:

4. Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի մյուս Կողմին մերժել սույն Հոդվածի 2-րդ կետում սահմանված լիազորությունների տրամադրումը կամ կարող է պարտադրել այնպիսի պայմանների կատարում, որոնք կհամարվեն անհրաժեշտ նշանակված ավիաընկերության կողմից սույն Համաձայնագրի Հոդված 2-րդում սահմանված իրավունքները իրականացնելու համար, բոլոր այն դեպքերում, երբ տվյալ Պայմանավորվող Կողմը վստահ չէ,

որ ավիաճեռնարկության արտոնյալ տիրապետումն ու իրական վերահսկողությունը պատկանում են ավիաճեռնարկության նշանակած Պայմանավորվող Կողմին կամ նրա քաղաքացիներին:

5. Երբ նշանակվում է ավիաընկերությունը և ստանում լիազորություններ, այն ցանկացած պահի կարող է սկսել համաձայնեցված հաղորդակցությունների իրականացումը քանի դեռ ուժի մեջ են սույն Համաձայնագրի Հոդված 6-ի դրույթներով սահմանված սակագները:

ՀՈԴՎԱԾ 4

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ

ԿԱՄ

ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ իրավունք ունի չեղյալ հայտարարել կամ դադարեցնել սույն Համաձայնագրի Հոդված 2-րդով մյուս Կողմի ավիաընկերությանը տրամադրած իրավունքները կամ պարտադրել պայմաններ, որոնք անհրաժեշտ են տվյալ իրավունքներից օգտվելիս՝

ա. երբ համոզված չէ, թե մյուս Կողմի նշանակված ավիաընկերության արտոնյալ տիրապետումը կամ իրական վերահսկողությունը պատկանում են ավիաճեռնարկությանը նշանակող Պայմանավոր-վող Կողմին կամ նրա քաղաքացիներին:

բ. Երբ տվյալ ավիաընկերությունը չի կատարում այդ իրավունքներն ընձեռնող Պայմանավորվող Կողմի օրենքներն ու կանոնները:

գ. Ցանկացած դեպքում, երբ տվյալ ավիաընկերությունը, որևէ այլ կերպ չի կատարում սույն Համաձայնագրով նախատեսված հաղորդակցություն-ները:

2. Բացի բոլոր այն դեպքերից, երբ անհրաժեշտ է սույն Համաձայնագրի 1-ին կետում սահմանված պայմաններով լիազորությունների անհապաղ չեղյալ հայտարարում կամ դադարեցում՝ օրենքների հետագա խախտումը հրատապ կանխելու համար, նման գործողության իրականացումը կատարվում է միմիայն Համաձայնագրի մյուս կողմի հետ խորհրդակցելուց հետո:

ՀՈԴՎԱԾ 5

ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻՑ

ԵՎ

ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏՈՒՄ

1. Փոխադարձ հիմունքներով յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ՝ հնարավորության սահմաններում և գործելով իր երկրի օրենքներին համապատասխան, մյուս Կողմի նշանակած ավիաընկերությանը ազատում է ներմուծման սահմանափակումներից, մաքսային հարկերից, ակցիզային հարկից, տեսչական ստուգման վճարներից, ինչպես նաև այլ հարկերից և մուծումներից, որոնք դրվում են ապրանքների, պահեստամասերի վրա՝ ներառյալ շարժիչները, օդանավի սարքավորումները, այդ թվում նաև օդանավի գույք ու մթերքը (ներառյալ ծխախոտ, լիկյոր, խմիչք, պարեն և այլ սննդամթերքներ, որոնք նախատեսված են թռիչքի ժամանակ սահմանափակ քանակությամբ վաճառել ուղևորներին) և այն բոլոր ապրանքատեսակները, որոնք նախատեսված են միմիայն Համաձայագրի մասնակից Կողմի նշած ավիաընկերության ծառայությունների իրականացման համար; դրանց մեջ են մտնում նաև տպագրված տոմսերը, բեռնագրերը և ավիաընկերության նշանը կրող բոլոր տպագիր նյութերը և նշանակված ավիաընկերության կողմից անվճար բաժանվող գովազդային նյութերը:

2. Սույն Հոդվածով արտոնյալ հարկերից ազատումը վերաբերում է սույն Հոդվածի 1-ին կետում նշված առարկաներին, որոնք.

ա. ներմուծվել են Պայմանավորվող Կողմերից մեկի տարածք՝ Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերության Կողմից կամ նրա անունից:

բ. Պահվել են Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերության օդանավում ՝ ժամանելիս կամ այնտեղից մեկնելիս:

գ. Ընդունվել են մյուս Պայմանավորվող Կողմի տարածք նշանակված ավիաընկերության օդանավ մյուս Կողմի տարածքում և նախատեսված են օգտագործման ՝ համաձայեցված ծառայություններն իրականացնելու համար:

Անկախ այն բանից, հարկերից ազատում տրամադրող Պայմանավորվող Կողմի տարածքում տվյալ առարկաները ինչպես են օգտագործվելու՝ մասամբ թե ամբողջովին, պայմանն այն է, որ տվյալ կողմի տարածքում այդ առարկաները օրանավից չօտարվեն:

Ա. բ. գ. կետերում նշված նյութերը կպահվեն մաքսային հսկողության ներքո:

3. Վերգետնյա սարքավորումները, ինչպես նաև Պայմանավորվող Կողմերից մեկի նշանակված ավիաընկերության օդանավում սովորաբար պահվող նյութերը և ապրանքատեսակները կարող են բեռնաթափվել մյուս Կողմի տարածքում միայն տվյալ տարածքի մաքսային իշխանությունների թույլտվությամբ. նման հանգամանքի դեպքում դրանք կարող են դրվել վերոհիշյալ իշխանությունների վերահսկողության ներքո այնքան ժամանակ մինչև դրանց ետ վերադարձվելը կամ հակառակ դեպքում կոչնչացվեն մաքսատան կանոնների համաձայն:

4. Սույն Հոդվածի 1-ին կետում նշված հարկերից ազատումը կիրառելի է նաև այն դեպքում, երբ Համաձայնագրի Կողմիերից մեկի ավիաընկերությունը պայմանագիր է ստորագրում մեկ այլ ավիաընկերության հետ, որին մյուս Պայմանավորվող Կողմը տրամադրել է հարկերից նման ազատում, մյուս Կողմի տարածքում՝ սույն Հոդվածի 1-ին կետում նշված ապրանքատեսակների փոխառման կամ փոխադրման համար:

ՀՈԴՎԱԾ 6

ՍԱԿԱԳՆԵՐ

1. Պայմանավորվող Կողմերից մեկի ավիաընկերության պահանջած սակագները մյուս կողմի տարածք կամ այնտեղից փոխադրումներ կատարելու համար պետք է սահմանվեն խելամիտ չափերով՝ հաշվի առնելով առկա բոլոր գործոնները, այդ թվում նաև շահագործման արժեքը, այլ ավիաընկերությունների հասույթները և սակագները: Պայմանավորվող Կողմերը պետք է անընդունելի համարեն այն սակագները, որոնք ունեն կողոպտիչ կամ խտրական բնույթ, չափազանց բարձր են կամ սահմանափակող՝ գերիշխող դիրքի չարաշահման պատճառով, կամ էլ արհեստականորեն նվազեցված են, քանի որ օգտվում են ուղղակի կամ անուղղակի պետական դոտացիայից:

2. Սույն Հոդվածի 1-ին կետում նշված սակագները պետք է համաձայնեցվեն Պայմանավորվող Կողմերի ավիաընկերությունների միջև՝ տվյալ երթուղին կամ նրա մի մասը շահագործող այլ ավիաընկերությունների հետ

խորհրդակցություններից հետո և նման պայմանավորվածության ձեռք բերման համար, այն դեպքերում, երբ դա հնարավոր է, անհրաժեշտ է հաշվի առնել Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի ընթացակարգը, կամ սակագների սահմանմանը միտված ցանկացած այլ միջազգային մեխանիզմ :

3. Այս ձևով համաձայնեցված սակագները ներկայացվում են երկու Կողմերի ավիացիոն իշխանությունների հաստատմանը, նրանց կիրառության մեջ դնելուց առնվազն 45 օր շուտ: Հատուկ դեպքերում այս ժամանակահատվածը կարող է կրճատվել՝ ունենալով իշխանությունների փոխհամաձայնությունը:

4. Հավանություն տալու ժամկետը նույնպես կարող է կրճատվել: Եթե ավիացիոն իշխանություններից և ոչ մեկը սակագները ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում չարտահայտի իր անհամաձայնությունը, ապա համաձայն սույն Հոդվածի 3-րդ կետի, այդ սակագները համարվում են ընդունված: Եթե ըստ 3-րդ կետի սակագների ներկայացման ժամկետը կրճատվում է, ավիացիոն իշխանությունների փոխհամաձայնությամբ հավանություն չտալու մասին, տեղյակ պահելու ժամկետը նույնպես կարող է 30 օրից պակաս լինել:

5. Եթե ըստ սույն Հոդվածի 2-րդ կետի սակագների շուրջ պայմանավորվածություն ձեռք չի բերվում, կամ ըստ սույն Հոդվածի 4-րդ կետի սահմանված ժամկետում ավիացիոն իշխանություններից մեկը տեղյակ է պահում մյուս Կողմի իշխանություններին՝ ըստ 2-րդ կետի դրույթների որևէ սակագնի շուրջ իր հավանություն չտալու մասին, ապա Պայմանավորվող երկու Կողմերի ավիացիոն իշխանությունները խորհրդակցելով որևէ այլ երկրի ավիացիոն իշխանությունների հետ՝ որոնց խորհուրդը իրենց համար արժեք է ներկայացնում, փորձում են սահմանել փոխհամաձայնեցված այլ սակագին:

6. Եթե ավիացիոն իշխանությունները չեն կարողանում համաձայնության գալ ըստ սույն Հոդվածի 3-րդ կետի ներկայացրած որևէ սակագնի շուրջ, կամ անկարող են որոշում կայացնել ըստ սույն Հոդվածի 5-րդ կետի սահմանած որևէ սակագնի շուրջ, ապա վեճը լուծվում է սույն Համաձայնագրի Հոդված 18-ի համաձայն:

7. Ըստ սույն Հոդվածի դրույթների հաստատված սակագները ուժի մեջ են քանի դեռ նոր սակագներ չեն հաստատվել: Սակայն, սույն դրույթով սակագնի ժամկետը չի կարող ավելին երկարաձգվել, քան 12 ամիս նրա գործողության ժամկետը լրանալուց հետո:

ՀՈԴՎԱԾ 7

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող Կողմերից մեկի նշանակված ավիաընկերությունը փոխադարձ հիմունքներով կարող է մյուս կողմի տարածքում ունենալ իր ներկայացուցչությունը, ինչպես նաև համաձայնեցված ծառայությունների իրականացման համար անհրաժեշտ կոմերցիոն և տեխնիկական անձնակազմ: Աշխատակազմը ընտրվում է Կողմերից մեկի կամ երկու Կողմերի քաղաքացիներից :

2. Աշխատակազմը իր վրա դրված պարտավորությունները իրականացնում է կամ սեփական անձնակազմի միջոցով կամ օգտվում է այլ կազմակերպությունների, ընկերությունների կամ մյուս Պայմանավորվող Կողմի ավիաընկերության ծառայություններից, որը լիազորված է նման ծառայություններ իրականացնել այդ Պայմանավորվող Կողմի տարածքում:

3. Ներկայացուցչությունը և աշխատակազմը գործում են մյուս Պայմանավորվող Կողմի օրենքներին և կանոններին համապատասխան և յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ գործելով այդ օրենքներին և կանոններին համապատասխան, փոխադարձության հիմունքներով, առանց իսկ նվազագույն հապաղման, պետք է սույն Հոդվածի 1-ին կետով նախատեսված ներկայացուցչությանը և նրա աշխատակազմին տրամադրի աշխատանքի թույլտվություն՝ այցագրեր կամ այլ նմանատիպ փաստաթղթեր, որոնք տրվում են ներկայացուցչությանը կամ աշխատողներին:

Կողմերից յուրաքանչյուրը պետք է աջակցի Պայմանավորվող մյուս Կողմի նշանակված ավիաընկերությանը՝ իր գրասենյակները բացելու, իր գործունեությունն ապահովող համապատասխան հարմարանքներ տրամադրելու գործում:

ՀՈԴՎԱԾ 8

ՕՐԵՆՔՆԵՐԻ

ԵՎ

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

1. Պայմանավորվող Կողմերից մեկի օրենքներն ու կանոնները, որոնք կարգավորում են միջազգային օդագնացության ոլորտում ընդգրկված օդանավի իր տարածք ժամանելը կամ այնտեղից մեկնելը, կամ առնչվում են իր տարածքում գտնվելիս այդ օդանավի շահագործմանը, վերրաբերվում են նաև մյուս Պայմանավորվող Կողմի նշանակած ավիաընկերության օդանավին՝ տվյալ տարածք ժամանելիս, այնտեղից մեկնելիս կամ այնտեղ գտնվելիս:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի օրենքներն ու կանոնները, որոնք վերաբերվում են իր տարածքով ուղևորների, բեռի և փոստի ընդունմանը, գտնվելուն, տարանցիկ փոխադրմանը կամ մեկնմանը, ինչպես նաև ժամանման, մեկնման, ներգաղթի, արտագաղթի, անձնագրերի, մաքսային, տարադրամային և սանիտարական հարցերի հետ առնչվող օրենքներին ու կանոններին, պետք է պահպանվեն Պայմանավորվող Կողմերի ավիաընկերությունների կողմից՝ մյուս Կողմի տարածք ժամանելիս, այնտեղից մեկնելիս կամ այնտեղ գտնվելիս:

ՀՈԴՎԱԾ 9

ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ

ԵՎ

ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄ

1. Պայմանավորվող Կողմերից մեկի ստացած, վավերական ճանաչված և ուժի մեջ գտնվող վկայականները և լիցենզիաները՝ համաձայնեցված ծառայություններ իրականացնելու նպատակով, վավերական են ճանաչվում նաև մյուս Կողմի կողմից, պայմանով, որ նրանց վավերական ճանաչելու պահանջները բավարարեն Կոնվենցիայի հաստատած նվազագույն չափանիշները:

2. Սակայն յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի իրավունք է վերապահվում մյուս Կողմի կողմից իր քաղաքացիներին տրված վկայականները և լիցենզիաները համարել անվավեր՝ իր սեփական տարածքում թռիչքների գերծանրաբեռնվածությունից խուսափելու համար:

ՀՈԴՎԱԾ 10

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող Կողմերը վերահաստատում են միմյանց նկատմամբ ունեցած փոխադարձ պարտավորությունները՝ պաշտպանելու քաղաքացիական ավիացիայի անվտանգությունը անօրինական միջամտություններից: Պայմանավորվող Կողմերը գործելու են 1963թ. սեպտեմբերի 14-ին Տոկիոյում ստորագրված՝ Օդանավում իրավախախտումների և որոշակի այլ օրինազանց արարքների մասին Կոնվենցիայի, 1970 թ. դեկտեմբերի 16-ին Հաագայում ստորագրված՝ Օդանավի անօրինական զավթումը կանխելու մասին Կոնվենցիայի, 1971 թ. սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված՝ Քաղաքացիական ավիացիայի անվտանգության հանդեպ օրինազանց արարքները կանխելու մասին Կոնվենցիայի և 1988թ. փետրվարի 24-ին Մոնրեալում ստորագրված՝ Միջազգային քաղաքացիական ավիացիոն սպասարկող օդանավակայաններում օրինազանց գործողությունների կանխման մասին արձանագրությանը համապատասխան:

2. Պայմանավորվող Կողմերը պարտավորվում են առաջին իսկ խնդրանքի դեպքում անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերել միմյանց՝ քաղաքացիական օդանավի օրինազանց զավթումը և նման օդանավերի, նրանց ուղևորների և անձնակազմի, օդակայանների և նավիգացիոն սարքավորումների, ինչպես նաև Քաղաքացիական ավիացիայի դեմ ցանկացած այլ կարգի բռնարարքները և նրանց անվտանգության հանդեպ ոտնձգությունները կանխելու նպատակով:

3. Պայմանավորվող Կողմերը իրենց փոխհարաբերությունները պետք է կառուցեն Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության սահմանած ավիացիայի անվտանգության մասին դրույթներին համապատասխան, որոնք իրրև Հավելվածներ կցվել են Կոնվենցիային; նրանք պետք է պահանջեն, որ իրենց կողմից գրանցված օդանավի շահագործողը կամ իրենց տարածքում մշտական ռեզիդենցիա կամ էլ հիմնական բիզնես ունեցող օդանավի շահագործողը, ինչպես նաև իրենց տարածքում գտնվող օդակայանների շահագործողները գործեն ավիացիայի անվտանգության դրույթներից ելնելով:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ համաձայն է, որ իրավունք է վերապահվում օդանավի շահագործողից պահանջել որպեսզի նա պահպանի

սույն Հոդվածի 3-րդ կետում նշված ավիացիոն անվտանգության պայմանները, որոնք առաջադրվում են Համաձայնագրի մի Կողմին մյուս Կողմի տարածք ժամանելիս, այնտեղից մեկնելիս կամ այնտեղ գտնվելու ժամանակ: Պայմանավորվող Կողմերը պետք է համապատասխան միջոցներ ձեռք առնեն ապահովելու համար իրենց տարածքում օդանավի պահպանությունը, ստուգելու համար ուղևորներին, անձնակազմին ձեռնածանրոցը, ուղեբեռը, բեռը, օդանավի պաշարները՝ օդանավի վայրէջքից առաջ, այդ ընթացքում և վայրէջքից հետո: Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ պարտավորվում է նաև բարյացակամ վերաբերմունք հանդես բերել մյուս Կողմի նկատմամբ, երբ ստացվում է որոշակի սպառնալիքի հանդեպ անվտանգության ապահովման հատուկ միջոցներ ձեռք առնելու խնդրանք:

5. Երբ առկա է Քաղաքացիական ավիացիայի օդանավի, նրա անձնակազմի, ուղևորների, օդակայանների կամ նավիգացիոն սարքավորումների նկատմամբ անօրինական զավթման կամ որևէ այլ օրինախախտման միջադեպ, Պայմանավորվող Կողմերը անհրաժեշտ օժանդակություն են ցուցաբերում միմյանց՝ հեշտացնելով հաղորդակցությունը, ինչպես նաև ձեռք առնելով այլ միջոցներ, սպառնալիքը արագորեն վերացնելու և անվտանգությունը ապահովելու համար:

6. Եթե Պայմանավորվող Կողմերից մեկը լուրջ պատճառներ ունի կասկածելու, որ մյուս Կողմը շեղում է թույլ տալիս սույն Հոդվածի ավիացիոն անվտանգության ապահովման դրույթներից, ապա այդ Կողմի ավիացիոն իշխանությունները իրավունք ունեն պահանջել անհետաձգելի խորհրդակցություն մյուս Կողմի ավիացիոն իշխանությունների հետ:

ՀՈԴՎԱԾ 11

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

Փոխադարձության սկզբունքի հիման վրա.

1. Պայմանավորվող Կողմերից մեկի նշանակված ավիաընկերությունը կարող է ուղղակիորեն կամ էլ իր գործակալների միջոցով (որոնք համապատասխան իշխանություններից նախօրոք ձեռք են բերել անհրաժեշտ լիազորություններ), մյուս Կողմի տարածքում ազատ վաճառել օդային տրանսպորտի փոխադրումներ, օգտագործելով թե՛ տեղական և թե՛ ցանկացած այլ ազատ փոխարկելի տարադրամ ինքնուրույն կամ գործակալների միջոցով՝ համապատասխան իշխանությունների թույլտվությամբ:

2. Պայմանավորվող Կողմերի նշանակված ավիաընկերությունները, ծասերից և եկամուտներից ստացված հասույթը իրավասու են փոխարկելու ազատ փոխարկելի որևէ տարադրամի, ինչպես նաև այդ հասույթները վաճառքի տվյալ տարածքից փոխանցելու իրենց երկիր: Այսպիսի կանխիկ փոխանցումների կարող են լինել ուղղակիորեն կամ էլ գործակալի միջոցով՝ ավիացիոն ծառայությունների վաճառքից, ինչպես նաև օժանդակ ծառայություններից ստացված հասույթները; վճարումները կատարվում են երկու երկրների միջև վճարումների վերաբերյալ գոյություն ունեցող պայմանագրի դրույթների՝ եթե նման պայմանագիր գոյություն ունի, կամ տարադրամին վերաբերվող կանոնակարգին համաձայն:

3. Պայմանավորվող Կողմերի նշանակված ավիաընկերությունները այդ փոխանցումների հաստատումը պետք է ստանան դրանց գործադրումից առնվազն 30 օրվա ընթացքում; նման փոխանցումների ընթացակարգը պետք է համապատասխանի այն երկրի դրամափոխանակման կանոնակարգին, որտեղ ստացվել է հասույթը:

4. Պայմանավորվող Կողմերի ավիաընկերությունը իրավասու է հաստատված հասույթները փոխանցել կամ դնել գործողության մեջ: Այն դեպքում, եթե տեխնիկական պատճառներով հնարավոր չէ այդպիսի փոխանցումը անմիջապես կատարել, Կողմերի ավիաընկերությունները կստանան փոխանցման առաջնահերթություն, ճիշտ այնպես ինչպես Պայմանավորվող Կողմի ներմուծումները:

5. Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը մյուս Կողմի նշանակված ավիաընկերությանը կազատի օդային ծառայություններից ստացված շահութահարկից, եկամտահարկից և տուրքերից: Այդ հարկերն ու տուրքերը պետք է գանձվեն միայն այն Կողմի տարածքում, որտեղ տեղակայված է տվյալ ավիաընկերությունը: Կողմերի միջև գործող հարկերից կրկնակի հարկումից խուսափելու մասին հատուկ համաձայնագրի առկայության դեպքում գերակայություն կունենա վերջինիս դրույթները:

ՀՈԴՎԱԾ 12

ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Երկու նշանակված ավիաընկերություններն էլ պետք է ունենան անաչառ և հավասար հնարավորություն սույն Համաձայնագրի Հավելվածում նշված համաձայնեցված ծառայությունները իրականացնելու համար:

2. Համաձայնեցված ծառայությունները իրականացնելիս յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերություն պետք է հաշվի առնի

մյուս Պայմանավորվող Կողմի նշանակված ավիաընկերության շահերը, որպեսզի անհարկի ձևով չվնասի ծառայություններին, որոնք այդ Կողմը մատուցում է նույն երթուղում, կամ էլ իր ցանցի այլ երթուղիներում:

3. Նշանակված ավիաընկերության կողմից համաձայնեցված հաղորդակցման մատակարարվող տարողությունը պետք է սերտորեն համապատասխանի Պայմանավորվող Կողմերի երկրների տարածքների միջև օդային փոխադրումների հանդեպ եղած պահանջների:

4. Համաձայնեցված հաղորդակցությունների իրականացման հաճախականությունը և չվացուցակները որոշվում են երկու նշանակված ավիաընկերությունների միջև փոխադարձ պայմանավորվածությամբ և կներկայացվեն ավիացիոն իշխանությունների հաստատմանը՝ նախքան այդ ծառայությունների իրագործումն սկսելը և առնվազն նրանց ուժի մեջ մտնելուց 30 օր առաջ: Եթե նշանակված ավիաընկերությունները միմյանց հետ չեն կարողանում ձեռք բերել նման պայմանավորվածություն, ապա խնդիրը ներկայացվում է Պայմանավորվող Կողմերի ավիացիոն իշխանությունների քննարկմանը:

5. Լրացուցիչ տարողությունների անհրաժեշտության դեպքում հարցը պետք է կոորդինացվեն նշանակված ավիաընկերությունների միջև, նախքան այն համապատասխան ավիացիոն իշխանությունների հաստատմանը ներկայացնելը:

6. Նշանակված ավիաընկերությունների միջև կնքված ցանկացած կոմերցիոն պայմանագիր պետք է ներկայացվի համապատասխան ավիացիոն իշխանությունների համաձայնեցմանը:

ՀՈԴՎԱԾ 13

ՁԵՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԶԵՑՈՒՄ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ իրավասու է պարտադրել, կամ թույլ տալ պարտադրել արդարացի և խելամիտ վճար՝ օդակայանների և այլ ավիացիոն սարքավորումների օգտագործման համար, պայմանով, որ այս վճարները չպետք է գերազանցեն նման միջազգային օդային ծառայություններում ընդգրկված այլ ավիաընկերությունների կողմից վճարածին:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ պարտավոր է խրախուսի և տալ խորհուրդներ իր իրավասու կազմակերպություններին վճարվելիք գումարը կազմակերպությունների ծառայություններից և ձևականություններից օգտվող նշանակված ավիաընկերություններին, իսկ այնտեղ որտեղ դա գործնականում հնարավոր է՝ ավիաընկերությունների ներկայացուցչական կազմակերպություններին: Անհրաժեշտ է օգտագործողներին ծանուցել վճարվելիք գումարների մեջ նախատեսվող փոփոխությունների մասին և նախքան այդ փոխությունները ուժի մեջ մտնելը, հնարավորություն տալ նրանց արտահայտելու իրենց կարծիքը:

3. Պայմանավորվող Կողմերից և ոչ մեկը չպետք է առավելություն տա իր կամ այլ ավիաընկերությանը պայմանավորվող մյուս Կողմի նմանատիպ միջազգային օդային ծառայություններ իրականացնող ավիաընկերության նկատմամբ՝ կապված իր վերահսկողության ներքո գտնվող մաքսատան, միգրացիոն, կարանտին և նման այլ ծառայությունները, որոնք օգտագործում են օդակայանները, օդային ուղիները, օդային տրանսպորտը սպասարկող ծառայությունները, նրանց հսկման ոլորտում գտնվող ձևականությունները:

ՀՈԴՎԱԾ 14

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի ավիացիոն իշխանությունները պարտավորվում են մյուս Կողմի ավիացիոն իշխանություններին, նրանց խնդրանքի դեպքում, տրամադրել խելամտորեն պահանջված վիճակագրական տվյալներ՝ նշանակված ավիաընկերության կողմից տրամադրվող տարողությունների կապակցությամբ:

ՀՈԴՎԱԾ 15

ՈՒՂԻՂ ՏԱՐԱՆՑՈՒՄ

Պայմանավորվող Կողմի տարածքով ուղիղ տարանցումով անցնող ուղևորները , որոնք չեն լքում օդակայանի տարածքը ենթարկվում են պարզեցված

ստուգման; ուղիղ տարանցման դեպքում բեռը և ուղեբեռը ազատվում են մաքսատուրքերից և այլ վճարներից:

ՀՈԴՎԱԾ 16

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Սերտորեն համագործակցության պայմաններում, Պայմանավորվող Կողմերի ավիացիոն իշխանությունները պետք է ժամանակ առ ժամանակ խորհրդակցություններ կազմակերպեն, սույն Համաձայնագրի և նրա Հավելվածի դրույթների իրականացման և անհրաժեշտ պայմանավորվածությունները ապահովելու նպատակով:

2. Նման խորհրդակցությունները կսկսվեն այդ մասին ծանուցումը ստանալուց 60 օրվա ընթացքում, եթե Պայմանավորվող Կողմերի միջև այլ պայմանավորվածություններ չկան:

ՀՈԴՎԱԾ 17

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Եթե Պայմանավորվող Կողմերից որևէ մեկը ցանկանում է փոփոխություններ մտցնել Համաձայնագրի դրույթներում, ապա նա իրավասու է խնդրել մյուս Պայմանավորվող Կողմի հետ խորհրդակցության անցկացում: Ավիացիոն իշխանությունների միջև նման խորհրդակցությունները կարող են կազմակերպվել խորհրդակցությունների կամ նամակագրության ձևով և պետք է սկսվեն խնդրանքի մասին ծանուցումը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում: Այս կերպ համաձայնեցված ցանկացած փոփոխություն ուժի մեջ կմտնի դիվանագիտական նոտաների փոխանակմամբ:

2. Սույն Համաձայնագրի Հավելվածների մեջ փոփոխությունները կարող են կատարվել, Պայմանավորվող Կողմերի իրավասու ավիացիոն իշխանությունների միջև ուղղակի պայմանավորվածության ձեռք բերմամբ և դիպլոմատիկ նոտաների փոխանակմամբ:

3. Համաձայնագրի մեջ լրացումներ և փոփոխությունները կկատարվեն, ցանկացած բազմակողմանի Կոնվենցիային համապատասխանելու համար, որոնց դրույթները կլինեն պարտադիր Պայմանավորվող Կողմերի համար:

4. Համաձայնագրերի փոփոխությունների, համապատասխան ցանկացած բազմակողմանի կոնվենցիայի, որոնք պարտադիր են երկու Պայմանավորվող Կողմերի համար:

ՀՈԴՎԱԾ 18

ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

1. Եթե սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման առնչությամբ Պայմանավորվող Կողմերի միջև առաջանում են վիճելի հարցեր, նախ և առաջ, Պայմանավորվող Կողմերը պետք է փորձեն լուծել դրանք բանակցությունների միջոցով:

2. Եթե Պայմանավորվող Կողմերը բանակցությունների միջոցով չեն հասնում վիճելի հարցերի լուծման, ապա, ըստ պայմանավորվածության, վեճը ներկայացվում է դատարանին՝ կազմված երեք միջնորդ դատավորներից, որոնցից երկուսը առաջադրվում են Պայմանավորվող Կողմերի կողմից, որից հետո այդ երկու դատավորները առաջադրում են երրորդին: Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ առաջադրում է մեկ դատավոր 60 օրվա ընթացքում այն բանից հետո, երբ Պայմանավորվող Կողմը ծանուցում է վիճելի հարցը դատարանով լուծելու իր պահանջը, իսկ երրորդ դատավորը նշանակվում է հաջորդ 60 օրերի ընթացքում: Եթե նշված ժամանակահատվածում Պայմանավորվող Կողմերից որևէ Կողմ չի առաջադրում իր դատավորին, կամ նշված ժամանակահատվածում չի առաջադրվում երրորդ դատավորը, ապա Պայմանավորվող Կողմերը դիմում են Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության խորհրդի նախագահին, դատավոր կամ դատավորներ առաջադրելու խնդրանքով: Ամեն դեպքում, երրորդ դատավորը պետք է լինի երրորդ պետության քաղաքացի, որի պետությունը դիվանագիտական հարաբերությունների մեջ է երկու Պայմանավորվող Կողմերի երկրների հետ, նա պետք է հանդես գա իբրև դատարանի նախագահ և պետք է որոշի, թե որտեղ է տվյալ գործը լսվելու: Արբիտրալ տրիբունալը ինքն է սահմանում իր ընթացակարգը և անհրաժեշտության դեպքում դիմում է օրենքի կիրառմանը:

3. Արբիտրալ տրիբունալը ընդունած ցանկացած որոշում պարտադիր է երկու Պայմանավորվող Կողմերի համար էլ, եթե հարցը միջնորդ դատարան ներկայացնելիս նրանք այլ որոշում չեն կայացրել:

4. Դատական ծախսերը հավասարապես բաժանվում են Պայմանավորվող Կողմերի միջև:

5. Եթե Պայմանավորվող Կողմերից որևէ Կողմ չի ենթարկվում սույն Համաձայնագրի 3-րդ կետի համապատասխան ընդունած որոշմանը, ապա մյուս Կողմը իրավասու է սահմանափակել կամ ետ վերցնել այն բոլոր իրավունքները, որը նա արտոնել է պարտավորությունները չկատարող Պայմանավորվող Կողմին, կամ պարտավորությունները չկատարող ավիաընկերությանը:

ՀՈԴՎԱԾ 19

ԳՐԱՆՑՈՒՄ

Սույն Համաձայնագիրը և բոլոր փոփոխությունները, ինչպես նաև փոխանակած դիվանագիտական նոտաները կգրանցվեն Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում:

ՀՈԴՎԱԾ 20

ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է անորոշ ժամանակով:

2. Պայմանավորվող ցանկացած Կողմ իրավասու է գրավոր ծանուցելու մյուս Պայմանավորվող Կողմին սույն Համաձայնագրի դադարեցման մասին որոշումը: Համանման ծանուցում հարկ է միևնույն ժամանակ ուղարկել նաև Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը: Նման պարագայում Համաձայնագիրը դադարեցվում է ծանուցումը ստանալուց 12 ամիս անց, եթե նախքան այս ժամկետի լրանալը փոխադարձ պայմանավորվածությամբ ծանուցումը ետ չի վերցվել: Եթե Պայմանավորվող մյուս Կողմի կողմից չի եղել ծանուցումը ստանալու մասին հաստատում, ապա համարվում է, որ այդ Կողմը ծանուցումը ստացել է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության կողմից ծանուցում ստանալուց 14 օր անց:

ՀՈԴՎԱԾ 21

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի այն պահից, երբ Պայմանավորվող Կողմերը դիվանագիտական ճոտաների փոխանակմամբ գրավոր տեղեկացնեն միմյանց իրենց սահմանադրական ձևականությունների իրականացման մասին, Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի վերջին այսպիսի ծանուցում ստանալու օրվանից:

Վկաների ներկայությամբ, ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է ք. Երուսաղեմում, 1997թ. –ի -ին, որը համապատասխանում է 5757թ. –ի -ին, եբրայերեն, անգլերեն և հայերեն լեզուներով, յուրաքանչյուրից երկուական բնօրինակ, բոլոր տեքստերը համազոր են: Մեկնաբանումների և տարաձայնությունների դեպքում գերապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Իսրայելի Պետության
կառավարության կողմից

Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից

ՀԱՎԵԼՎԱԾ

Իսրայելի Պետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև Օդային հաղորդակցությունների վերաբերյալ Համաձայնագրի:

1. Իսրայելի նշանակած ավիաընկերության օդային հաղորդակցությունների կատարման երթուղիները

Մեկնման վայրեր	Ցանկացած վայր Իսրայելում
Միջանկյալ վայրեր	Ցանկացած
Վայրեր Հայաստանում	Ցանկացած
Սահմաններից դուրս վայրեր	Ցանկացած

2. Հայաստանի նշանակած ավիաընկերության օդային հաղորդակցությունների կատարման երթուղիները

Մեկնման վայրեր	Ցանկացած վայր Հայաստանում
Միջանկյալ վայրեր	Ցանկացած
Վայրեր Իսրայելում	Ցանկացած
Սահմաններից դուրս վայրեր	Ցանկացած

3. Վերոհիշյալ օդային հաղորդակցությունները կիրականացվեն առանց 5-րդ ազատության իրավունքի՝ դեպի երրորդ երկրներ կամ այնտեղից, եթե չկա փոխադարձ պայմանավորվածություն համապատասխան ավիաընկերությունների միջև: Նման պայմանագրերը կիրառության մեջ մտնելուց առաջ ենթակա են համապատասխան ավիացիոն իշխանությունների հաստատմանը:

4. Ցանկացած կամ բոլոր միջանկյալ կամ սահմաններից դուրս վայրերը, նշանակած ավիաընկերության կարծիքի հիման վրա կարելի է բաց թողնել՝ ցանկացած կամ բոլոր երթուղիները, պայմանով, որ երթուղիները սկսվում և վերջանում են ավիաընկերության նշանակած Կողմի տարածքում: